ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն.

1) ճարտարագետ-երկրաբան, երկրաբանահանքագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ Կոնստանտին Պաֆենհոլցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծի պողոտա h.32 հասցեում փակցնելու համար,

2) Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, պատմաբան, հրապարակախոս, թարգմանիչ Գարեգին Հարությունյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց h.20 հասցեում փակցնելու համար,

3) հայ մեքենագետ, ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության մեքենայացման հիմնադիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Սմբատ Սահակյանի և նրա որդու՝ հայ գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էդուարդ Սահակյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց h.33 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ճարտարագետ-երկրաբան, երկրաբանահանքագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Կոնստանտին Պաֆենհոլցը** ծնվել է 1893թ. մարտի 5-ին Բեսարաբիայի (այժմ՝ Մոլդովա) Ալբինեց գյուղում: Միջնակարգ կրթությունն ստացել է Քիշնևի ռեալական դպրոցում: 1920թ. ավարտել է Պետերբուրգի լեռնային ինստիտուտը:

1919 թվականից Պաֆենհոլցն աշխատել է Համառուսաստանյան երկրաբանական կոմիտեում: 1923թ. երկրաբանական աշխատանքի է անցել Անդրկովկասում, որտեղ շուրջ կես դար զբաղվել է Փոքր Կովկասի երկրաբանությամբ: 1928թ. ձեռնարկել է Կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերի երկրաբանական քարտեզագրումը: 1932-1933թթ. մասնակցել է Պամիրի դեռևս չհետազոտված բարձր լեռնային վայրերն ուսումնասիրող տաջիկապամիրյան արշավախմբի աշխատանքներին:

1933-1941թթ. Հայաստանի և Ադրբեջանի տարածքների մեծ մասի համար կազմել է 1:42000 և 1:50000 մասշտաբների երկրաբանական քարտեզներ:

Հայրենական պատերազմի տարիներին, լինելով Հայկական երկրաբանական վարչության գլխավոր երկրաբան, աշխատանքներ է կատարել ռազմական երկրաբանության գծով: Այդ նույն տարիներին ավարտել է Հայաստանի երկրաբանությանը նվիրված իր մեծարժեք աշխատությունը և 1943թ. ներկայացրել պաշտպանության որպես դոկտորական ատենախոսություն: 1943թ. նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: 1945թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1945-1952թթ. Պաֆենհոլցը եղել է ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետի պրոֆեսոր: 1959 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Պաֆենհոլցը բազմաթիվ քարտեզների հեղինակ է: Նրա Կովկասի երկրաբանական քարտեզը, որպես եզակի նմուշ, ցուցադրվել է 1966թ. Մեքսիկայում կայացած երկրաբանական 20-րդ միջազգային համաժողովում: “Геология Армении” (М.Л., 1948) հիմնարար աշխատությունը 1950թ. արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Պաֆենհոլցը համամիութենական հանքաբանական և աշխարհագրական ընկերությունների անդամ էր, ՀԽՍՀ, Ադր. ԽՍՀ և Վր. ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

Պարգևատրվել է Լենինի (2), Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով և «Կովկասի պաշտպանության համար» մեդալով:

Կոնստանտին Պաֆենհոլցը մահացել է 1983թ. սեպտեմբերի 24-ին, Լենինգրադում:

Ճարտարագետ-երկրաբան, երկրաբանահանքագիտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Պաֆենհոլցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծի պողոտա հ.32 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է

ներկայացվել երկրաֆիզիկոս, Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողովի իսկական անդամ Գուրգեն Մալխասյանի և ինժեներ-երկրաբան Քրիստինե Բաղդասարյանի կողմից:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, պատմաբան, հրապարակախոս, թարգմանիչ **Գարեգին Հարությունյանը** ծնվել է 1922 թ. ՀԽՍՀ Գորիս քաղաքում:

1950թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1954թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական գիտաթեզ «Անգլիայի քաղաքականությունը հայկական հարցում 19-րդ դարի 90-ական թվականներին» թեմայով:

1940թ. աշխատանքի է անցել Հանրապետական երիտասարդական թերթում:

1943-1945թթ. եղել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի սեփական թղթակիցը Հայաստանում: 1954-1957թթ. ընդհանուր և նորագույն պատմություն է դասավանդել ՀԿԿ Կենտկոմին կից եռամյա կուսակցական դպրոցում:

1957-2006թթ. աշխատել է ԵՊՀ ընդհանուր պատմության ամբիոնում՝ վարելով նոր պատմության հիմնական և մի շարք մասնագիտական դասընթացներ:

1962-1973թթ. եղել է ԵՊՀ-ի արտասահմանյան ուսանողների նախապատրաստական ֆակուլտետի դեկան:

Գարեգին Հարությունյանի գիտական աշխատանքների հիմնական թեմաներից մեկը եղել է հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թվականներին և անգլիական դիվանագիտության քաղաքականությունն այդ հարցում: Հեղինակ է մենագրության և շուրջ 20 գիտական հոդվածների՝ նվիրված Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին, միջազգային դրությանը և այլ հարցերի: Ունի մեծ ավանդ 1960-1970-ական թվականներին «Հայաստանի խորհրդային հանրագիտարանի» կազմման գործում: Մասնակցել է մի շարք գիտաժողովների: Արժանացել է միութենական և հանրապետական կառավարական պարգևների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչման (2009թ.):

Նա հեղինակ է նոր և նորագույն պատմության առանցքային խնդիրներին նվիրված բազմաթիվ դասախոսությունների, այդ թվում՝ «Արդյունաբերական քաղաքակրթության կայացումը 17-18-րդ դարերում», «Անգլիական հեղափոխությունը», «Պարլամենտարիզմի սկզբնավորումը և զարգացումը Եվրոպայում», «Լուսավորչական շարժումը», «Ֆրանսիական մեծ հեղափոխությունը», «Նապոլեոն», «Ազատական շարժումը Եվրոպայում» և այլն: Իր պատմաբանական, հրապարակախոսական և թարգմանչական գործունեությամբ Գարեգին Հարությունյանը կրթել է գրագետ և բանիմաց պատմաբանների սերունդներ:

Գարեգին Հարությունյանը մահացել է 2013թ.:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, պատմաբան, հրապարակախոս, թարգմանիչ Գարեգին Հարությունյանի հիշատակը հավերժացնող

հուշատախտակն Աբովյան փողոց հ.20 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Ալեքսանդր Հարությունյանի կողմից:

Հայ մեքենագետ, ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության մեքենայացման հիմնադիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ **Սմբատ Սահակյանը** ծնվել է 1895թ. հոկտեմբերի 2-ին Ձորագյուղում (Հայաստան):

1921 թվականին ավարտել է Նովոչերկասկի պոլիտեխնիկական ինստիտուտը, 1930 թվականին՝ Մոսկվայի գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրիֆիկացման ինստիտուտը: 1931-1971 թվականներին եղել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման, ապա՝ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ամբիոնի վարիչ:

Սահակյանի մասնակցությամբ Հայաստանում կազմակերպվել են գյուղատնտեսական մեքենաների համատեղ օգտագործման առաջին ընկերությունները, մեքենատրակտորային ջոկատները: Գիտական աշխատանքները վերաբերում են լեռնային և ջրովի երկրագործության մեքենայացման, Հայաստանի քարքարոտ հողերի յուրացման, գյուղատնտեսական մեքենաների հենքային մակերևույթների և բնահողի փոխազդման և այլ հարցերին:

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Սմբատ Սահակյանը մահացել է 1971թ. դեկտեմբերի 10-ին, Երևանում:

Հայ գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Էդուարդ Սահակյանը** ծնվել է 1933թ. սեպտեմբերի 24-ին, Վրաստանում:

1963-2010 թվականներին դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտուի «Մեխանիզմների և մեքենաների տեսություն» ամբիոնում: Վերջին տարիներին եղել է այդ ամբիոնի վարիչ: Նա բազմաթիվ գիտական աշխատությունների, մասնագիտական գրքերի և ուսումնական ձեռնարկների հեղինակ է և գյուտարար:

Էդուարդ Սահակյանը մահացել է 2015թ. օգոստոսի 6-ին Երևանում:

Հայ մեքենագետ, ՀՍՍՀ-ում գյուղատնտեսության մեքենայացման հիմնադիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Սմբատ Սահակյանի և հայ գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էդուարդ Սահակյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոց հ.33 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Կարինե Սահակյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**